

# **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

## **ՌՈՂԱ ՅՈՒՐԻԻ ԱՎԱԳՅԱՆ**

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ռ**

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական դեկան՝

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
ՀԱՅԿ ՌԱԶՄԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ԳՐԻԳՈՐԻ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՎԱՀԱՆՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
ՏՈՆԻԿ ԼԵՎՈՆԻ ՔՈԶԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Ատենախոսության իրապարակային պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հուլիսի 13-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փողոց, 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թվականի հունիսի 2-ին:

002 Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, դոցենտ

Վ.Ս. Ալեքսանյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Անկախություն ձեռքբերած երկրների համար իրականացվող տնտեսական բարեփոխումների առավել կարևոր և բարդ խնդիրներից է լայնուժավալ աղքատության կրճատումը, ծայրահետ աղքատների տեսակարար կշռի նվազեցումը, աղքատության խորության և սրության հետագա նվազեցումը, աղքատության խորության և սրության հետագա ավելացման արգելափակումը: Հարկ է նշել, որ Արցախի Հանրապետությունում, կառավարության հովանու ներքո, համայն հայության, միջազգային հանրության աջակցությամբ և քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ դանդաղորեն զարգացում ապրեց կրթության և առողջապահության մատչելիությունը, զբաղվածության ու սոցիալական ապահովությունը, որոնք բերեցին բնակչության բարեկեցության մակարդակի աստիճանական բարձրացմանը:

1991թ. Արցախի Հանրապետությունն անցում կատարեց շուկայական հարաբերություններին, ձեռնարկեց տնտեսական բարեփոխումներ, ստեղծեց ինստիտուցիոնալ կառավարման համակարգ, իրականացրեց պետական սեփականության ապակենտրոնացում և մասնավորեցում: Մասնավորեցման գործնթացը չստացավ տրամաբանական շարունակություն, որին խոշընդունեցին պատերազմական իրավիճակները և իրավաօրենսդրական դաշտի անկատարությունը: Դրանց հետևանքով զգայիրեն կրճատվեց գործող ձեռնարկությունների թիվը, ինչն էլ մեծացրեց գործազուրկների քանակը, չստեղծվեց արյունավետ շուկա, չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի խավ: Մնացած ձեռնարկություններն արյունավետ մասնավորեցնելու նպատակով, պետք էր հստակեցնել մասնավորեցման ծրագրերը, իրականացնել մասնավորեցման ենթակա գործի ճիշտ գնահատման քաղաքականություն:

Արցախի Հանրապետությունում (ԱՀ) կապիտալի շուկայի զարգացմանը խոշընդունում է այն հանգամանքը, որ դեռևս չեն ձևավորվել կառուցակարգեր և պայմաններ, որոնց միջոցով խնայողությունները կվերածվեն ներդրումների, ինչպես նաև ներդրումային ու ֆինանսական գործիքների բացակայությանը: Ֆինանսական շուկայի անրավարար վիճակը պայմանավորված է նաև շուկայի անհրաժեշտ ենթակառուցվածքների թույլ զարգացվածությամբ, առանձին դեպքերում նաև բացակայությամբ: Ֆինանսական շուկայի զարգացումը պայմանավորված է բանկային համակարգի զարգացմամբ և ֆինանսական շուկայի այլ ինստիտուցիոնալ մասնակիցների (ինվեստիցիոն, ապահովագրական, վարկային կազմակերպություններ) կայացմամբ:

ԱՀ-ում ներդրումների ներկայիս ծավալները շատ հեռու են բավարար լինելուց, դրանք խիստ ցածր են տնտեսության կայուն աճ ապահովելու գործում: Չնայած Արցախի կառավարության կողմից ներդրումների որոշիչ դերի գիտակցմանը, ձևավորված մակրոտնտեսական կայունությանը, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտին, դրանք խրախուսող ու պաշտպանող

Ենթակառուցների առկայությանը, այս հարցում Սփյուտքի ակտիվ մաս-նակցությանը, այդուհանդերձ, այստեղ ներդրումները չեն գտնվում ցանկալի մակարդակում՝ պայմանավորված աշխարհաքաղաքական բարդ հրավիճակով և թիգնեսի համար ռիսկայնության բարձր աստիճանով:

Այս ամենն ուղղակիորեն և անուղղակիորեն իրենց ազդեցությունն են թողնում երկրի սոցիալական վիճակի և հատկապես բնակչության կենսա-մակարդակի բարձրացման վրա: ԱՀ-ում սոցիալական լորտի բարեփոխումները հստակ մշակված սոցիալական քաղաքականության գերակայությունների և նպատակների դասակարգմամբ չեն առաջնորդվել, ունեցել են առավելապես մարտավարական, քան ռազմավարական բնույթ: Երկրի կառավարության ջանքերն ուղղված խոցելի խմբերի կարիքերի բավարարմանը, դեռևս կրում է չհամակարգված մուտեցում, քանզի սոցիալական քաղաքականությունը գտնվում է կայացման փուլում, իսկ առկա բացթողումները պայմանավորված են տնտեսական հրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միանական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալա-կան ապահովության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերի անբավարարությամբ, սոցիալական գործնթացների հետազոտության համա-կարգի բացակայությամբ, ինչի ներդրումը կհստակեցնի բարեփոխումների սո-ցիալական հետևանքների կանխատեսումների ճգրտությունը:

Նշված խնդիրների հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորել է ատենախոսության թեմայի ընտրությունը, վեր հանված հարցերի ուսումնա-սիրության շրջանականերն ու խորությունը, ատենախոսության կառուցվածքը, որն էլ հիմք է ծառայել թեմայի արդիականության և հրատապության հրակա-նացման համար:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Աւելնախոսության նպա-տակն է Արցախի Հանրապետությունում բնակչության բարեկեցության բարձ-րացման հիմնախնդիրների լուծման ուղիների բացահայտմամբ մատնանշել այն օրակարգային հարցերը, որոնք առաջին հերթին հնարավորություն կտան կրծատել աղքատության մակարդակը, մեղմել դրա սրությունը, նվազեցնել գործազրկության աստիճանը, ապահովել եկամուտների բաշխման արդա-րությունը և վարել սոցիալական այնպիսի քաղաքականություն, ինչը կրերի իշխանությունների հանդեպ վստահության վերականգնմանը:

Նպատակի հրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսական աճի հաշվարկման ժամանակակից մոտե-ցումներն ու մոդելները, հայրենական տնտեսագիտության մեջ դրանց կիրառ-ման առանձնահատկությունները,

- վեր հանել բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա ազդող գործոնները, դրանց կառավարման արդի կազմակերպատնտեսական մոտե-ցումները,

• Վերլուծել բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը, դրա հիման վրա մշակել Արցախում կիրառելի մոտեցումները,

• Վերլուծել Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների դիմամիկան, բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կարող են բերել բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը,

• Ներկայացնել աղքատության հաղթահարման պետական աջակցության ծրագրերը և Արցախի Հանրապետությունում կիրառվող սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները,

• Բացահայտել Արցախի Հանրապետությունում տնտեսական աճի ապահովման ու տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, որոնք կնպաստեն աղքատության մակարդակի կրճատմանը և բարձրացնել բնակչության բարեկեցության աստիճանը,

• Բացահայտել սոցիալական տրանսֆերուների ազդեցությունը հանրապետությունում կոմունալ-կենցաղային աղքատության հաղթահարման գործում,

• Վեր հանել աղքատության հաղթահարման պետական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները, որոնք կրերեն տնտեսության զարգացմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը,

• Իրականացվող ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա, մատնանշված հիմնախնդիրների լուծման նպատակով, ներկայացնել բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության հաղթահարման առաջարկություններ Արցախի Հանրապետությունում:

**Ընտագուտության օբյեկտ և առարկան:** Ընտագուտության օբյեկտ է ընտրվել Արցախի Հանրապետության բնակչության աղքատության նվազեցման և բարեկեցության բարձրացման կազմակերպա-տնտեսական համակարգը, իսկ որպես առարկա՝ այդ հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները:

**Ընտագուտության տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը:** Ալտենախոսությունում առաջարրված խնդիրների լուծման համար տեսական և տեսամեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական և ժամանակակից հեղինակների աշխատությունները, բնակչության աղքատության նվազեցմանը և բարեկեցության բարձրացմանը վերաբերվող հայրենական և արտասահմանյան տնտեսագետների գիտական հրապարակումները, տվյալ հիմնախնդիրն վերաբերվող մասնագիտական վերլուծությունները, ԱՀ Սահմանադրությունը, ԱՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից ընդունված օրենքները, ԱՀ Նախագահի հրամանագրերը, ԱՀ Կառավարության որոշումներն ու ծրագրերը, միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից հրապարակված ԱՀ տնտեսությանը վերաբերվող վերլուծական նյութերը:

**Ընտագուտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:** Ընտագուտության հիմքում առաջարրված հիմնախնդիրների և հարցերի ուսումնասիրությունները, հետազոտության օբյեկտին և առարկային վերաբերվող

տեսամեթոդական, վիճակագրական, ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի վերլուծությունները հանգեցրել են մի շարք գիտական արդյունքների, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները.

- Բացահայտվել է աղքատության և բարեկեցության կատեգորիաների հակադարձ դիալեկտիկական և հայելային արտացոլման կապը:
- Հիմնավորվել է ինֆյացիոն երևույթների ազդեցությունը մեղմելու և բնակչության բարեկեցության մակարդակի կայունության ապահովման նպատակով սոցիալական պետական տրանսֆերտների ինդեքսավորման անհրաժեշտությունը,
- Բացահայտվել են գրոսաշրջությանը խոչընդոտող գործոնները և տրվել է ԱՀ-ում գրոսաշրջության զարգացման համար Հայաստանի Հանրապետության միջոցով ԵԱՏՄ երկրների և Իրանի հետ տնտեսական ինտեգրման նախադրյալները և տրվել են տնտեսական հարաբերությունների իրականացման ուղիները,
- Բացահայտվել և ներկայացվել են Արցախի Հանրապետությունում տնտեսության զարգացման համար Հայաստանի Հանրապետության միջոցով ԵԱՏՄ երկրների և Իրանի հետ տնտեսական ինտեգրման նախադրյալները և տրվել են տնտեսական հարաբերությունների իրականացման ուղիները,
- Հիմնավորվել է ԱՀ-ում գործող սոցիալական քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը և տրվել են սոցիալական աջակցության, սոցիալական երաշխիքների և սոցիալական ապահովության այնպիսի կառուցագրեր, որոնք կերաշխսավորեն նաև գոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պաշտպանվածությունը:

**Ատենախոսության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:** Հետազոտության արդյունքների կիրառական նշանակությունը պայմանավորված է Արցախի Հանրապետությունում աղքատության հաղթահարման և բնակչության կենսամակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ, որը կարող է իրականացվել արդյունաբերության, գյուղատնտեսության, գրոսաշրջության, տարածաշրջանների համաշափ զարգացման շնորհիվ, ինչն էլ իր հերթին կրերի արտագաղթի փոխարեն ունենալ ներգաղթ, կմեծացնի բնակչության բնական աճի տեմպերը, կբարեկավի երկրի ժողովրդագրական վիճակն իր բոլոր ածանցյալ հետևանքներով:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ԱՀ-ում սոցիալական քաղաքականության մշակողների և իրագործողների կողմից (ԱՀ կառավարություն, տարածքային կառավարման մարմիններ, նյութական բարիքներ արտադրող և ծառայություններ մատուցող նախարարություններ, դեպարտամենտներ, տվյալ հիմնախնդրով գրադպուտ փորձագետներ և այլն):

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Ատենախոսության հիմնական դրույթները, հետազոտությունների արդյունքները և առաջարկությունները ըննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ազգորիգնեսի կառավարման և Ազգարային Էկոնոմիկայի ամ-

թիոնների համատեղ նիստում: Աստենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են աստենախոսի 9 գիտական հոդվածներում:

**Աստենախոսության կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Աստենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 154 համակարգչային էջ, ներայալ՝ 107 անոն գրականության ցանկը, պարունակում է 32 այլուսակ և 2 գծապատկեր:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են օբյեկտը և առարկան, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:

**Առաջին՝ «Բարեկեցության տեսամեթոդական հիմքերը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից՝ առաջին ենթագլխում վերլուծվել է տնտեսական աճի վերաբերյալ տնտեսագիտության տեսության առաջատար տնտեսագետների տեսակետները (Ա.Միթյ, Կ.Մարքս, Ա.Մարշալ, Զ.Քեյնս), հանգեցնելով նրան, որ տնտեսական աճը բարդ գործնթաց է, ինչը ներառում է որոշակի գործոններ, որոնք հաճախ միմյանց հետ գտնվում են փոխադարձ կապի մեջ: Չնայած տնտեսագետները դեռ անկարող են ապահովել մեզ տնտեսական աճի ճշգրիտ բաղադրատոմսով, բայց և այնպես, հայտնի են դրա երեք կարևորագույն աղբյուրները՝ ֆիզիկական և մարդկային կապիտալում ներդրումներ, տեխնոլոգիական առաջընթաց և տնտեսական կազմակերպման կատարելագործում:<sup>1</sup>

Տնտեսական աճը չափվում է մի շաբթ ցուցանիշների միջոցով՝ իրական համախառն ներքին արդյունքի (*ՀՆԱ*) բացարձակ հավելանով, իրական *ՀՆԱ* տեմաթերի հավելանով, բնակչության մեկ շնչի հաշվով իրական *ՀՆԱ-ի* հավելանի տեմպերով, ինչպես նաև բնակչության մեկ գրադիվածի իրական *ՀՆԱ-ի* հավելանի տեմպերով:<sup>2</sup>

Ժամանակակից տնտեսական աճը, ինչպես բնորոշում է ամերիկացի տնտեսագետ Սայմոն Կոլգանցը<sup>3</sup>, դա տնտեսական զարգացումն է, որի պարագայում արտադրության կայուն երկարատև աճի տեմպը գերազանցում է բնակչության աճի տեմպերին: Կայուն տնտեսական աճը պետք է ուղեկցվի

<sup>1</sup> Գոռշենի Ջեյմս Դ. և ուրիշներ, Տնտեսագիտություն, մասնավոր և հասարակական ընտրություն: 8-րդ հրատարակություն, ԵՊՃՏՀ-ի «Տնտեսագետ» հրատ. (թարգմանություն), Եր. 1999, էջ 1031 (1152 էջ)

<sup>2</sup> Մուսեև Ը.Բ. Մակրօքոնոմիկա: Սահմանագիր /Ը.Բ.Մուսեև – Մ.: ԿԻՈՐՍ, 2008, ստ. 56 /320 стр./

<sup>3</sup> Սայմոն Կոլգանց, ազգությամբ ռուս, ստեղծել է ժամանակակից ազգային եկամտի հաշվիների մերուդանությունը և մշակել ԱՄՆ-ի ազգային եկամտի առաջին ցուցանիշը: Նրան անվանում են «Ազգային եկամտի հաշվիների հայր»:

որակական վերափոխումներով: Որակական փոփոխությունների նախանշան-ներն են. աճի գործոնների օգտագործման արդյունավետության բարձրացում, մարդկային կապիտալագործում, ինովացիոն գործոններության զարգացում, առաջավոր տեխնոլոգիաների ստեղծում, ծառայությունների ոլորտի զարգացում, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանում և այլն:

Տնտեսական աճի գործոնների ու տեսությունների բացահայտման ու վերլուծությունների հիմն վրա, տնտեսագիտական տարրեր՝ դարցների կողմից տրվել են նաև տնտեսական աճի որոշակի մոդելներ, որոնցում փորձ է կատարվում այս կամ այն մեթոդական մոտեցումներով վեր հանել այդ հոյժ կարևոր տնտեսական կատեգորիայի էտվայունը, նրա տեմպերի օպտիմալ չափերի հիմնավորումը, գործոնների հավասարակշռված կիրառման միջոցով նպաստել ոչ թե միայն երկրի տնտեսական աճին, այլ նաև տնտեսական զարգացմանը, աղքատության կրճատմանը, բնակչության կենամակարդակների համահարթեցմանը և ընդհանրապես մակրոտնտեսական միջավայրի բարելավմանը:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ ենթագլխում բնութագրվում է բնակչության կենսամակարդակը և բացահայտվում կենսամակարդակի փոփոխության վրա ազդող գործոնները: Բնակչության կենսամակարդակը բնութագրվում է մարդկանց նյութական, հոգևոր և սոցիալական պահանջմունքների բավարարման աստիճանով, որը տարբերվում է «կյանքի որակ» կատեգորիայից, քանզի վերջինիսի մեջ ընդգրկվում են նաև մարդու առողջական վիճակը, կրթական և մտավոր ներուժը՝ մարդկային կապիտալի ցուցանիշները, ինչպես նաև կենսապայմանները, բնակվելու միջավայրը և այլն:

Առաջին գլուխում ամփոփվում է բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը, որտեղ ներկայացնում է միջազգային պրակտիկայում տեղ գտած համաշխարհային բանկի (ՀԲ) և ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի բանաձևի որոշ հատվածներ՝ կապված բնակչության բարեկեցության բարձրացման խնդիրների հետ: Աշխատանքում համառոտ վերլուծել է Սինգապորի, Իսրայելի փորձը, դիտարկվել են հիմնախնդիրի հետ առնչվող տեսությունները և մոդելները:

**Երկրորդ գլխում՝ «Տնտեսական աճի և բարեկեցության մակարդակի վերլուծությունն ու գնահատականը Արցախի Հանրապետությունում»** վերտառությամբ, քննարկվում են Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, ներկայացվում են բարեկեցության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները, դրանց վերլուծությունը և բարձրացման հիմնախնդիրները, որից հետո անդրադարձ է կատարվում նաև աղքատության հաղթահարման պետական աջակցության ծրագրերին և սոցիալական քաղաքականությանը:

Արցախի Հանրապետությունն կազմավորվել է 1991 թվականի սեպտեմբերի 2-ի անկախության հոչակագրով, պատմական Արցախ աշխարհի մի մասում հայ բնակչության ազատ անկախ ապրելու հրավունքի հիման վրա: 2006 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Սահմա-

Նադրությունը, որն Արցախը հռչակեց անկախ, ինքնիշխան և իրավական պետություն Անդրկովկասում<sup>4</sup>:

Տնտեսական բարեփոխումները ԱՀ-ում սկսեցին գյուղատնտեսության ոլորտից, իշխանությունները փորձեցին պահպանել նախկին կոլեկտիվ և պետական տնտեսությունները՝ վերափոխելով դրանք գյուղացիական կոռուբ-րատիվների: Իրականացվեց գյուղատնտեսական հողերի, գյուղատնտեսական տեխնիկայի և անասունների աստիճանական սեփականաշնորհում: 1998 թվա-կանից վարելահոդերը բաժանվեցին գյուղացիներին: Գյուղական յուրաքանչյուր բնակիչ ստացավ 0.6 հա վարելահոդ՝ ընտանիքը միջին հաշվով 2.5 հա:

Արցախի Հանրապետությունում գրանցված է 15 հազար գյուղացիական (բնակչության) տնտեսություն, հողային բարեփոխումները նրանց բոլորին հնա-րավորություն տվեցին իրականացնել սեփական <> տնտեսության վարում, ինչի արդյունքներն արդեն զգացվեցին պատերազմական գործո-դրությունների ավարտից մի քանի տարի հետո: 1999թվականին այն կարողացավ բավարարել հացահատիկի պահանջը: 2002 թվականին հացահատիկի համա-խառն բերքը 66000 տոննա էր, 2003թ.-ին՝ 100 հազ. տոննա, որը հասավ 1990 թվականի մակարդակին:<sup>5</sup>

Ագրարային բարեփոխումներից հետո իրականացվեց նաև հարկային բարեփոխումներ, ինչն իր հերթին խթանեց տնտեսության զարգացմանը: Այսպես, շահութահարկի դրույքաչիք 32%-ից հետքվեց 5%-ի, իսկ եկամտա-հարկինը՝ 30%-ից՝ նոյնպես 5%-ի: Կառավարությունը վերացրեց բոլոր տեսակի հարկերը առևտորի ոլորտում, բացառությամբ միասնական շրջանառության հարկը, որը սահմանվեց 2.5%: Ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ) ազատվում են գյուղատնտեսական հումք վերամշակողները, իսկ սոցիալական հարկի չափը 28%-ից հետքվեց 13%-ի:

Բնակչության կենսամակարդակի ամբողջական ցուցանիշը է համարվում բնակչության մեկ շնչի հաշվով բաժին ընկնող ՀՆԱ-ի ծավալները:

1990-2012 թթ. Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերն ավելի բարձր են գրանցվել, քան ՀՀ-ի և նույնիսկ Ադրբեջանինը: Այսպես, դա ՀՀ-ում կազմել է 162, Ադրբեջանում՝ 249, իսկ Արցախի Հանրապետությունում՝ 267%:<sup>6</sup> Բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցա-նիշներից է բնակչության մեկ շնչի հաշվով իրական դրամական եկամուտների և ծախսերի չափը, ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով և այլն:

<sup>4</sup> ԼՂՀ Սահմանադրություն, 10.12.2006թ.

<sup>5</sup> ԼՂՀ վիճակագրական տարեգիր 2002-2008թթ., Ստեփանակերտ, էջ 189

<sup>6</sup> Համաշխարհային բանկի ([www.worldbank.org](http://www.worldbank.org)) և ԼՂՀ վիճակագրական ծառայության տվյալներ

Աղյուսակ 1

ԱՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալները 2000-2017թթ.<sup>7</sup>

Տարիներ	ԼՂՀ (ԱՀ)			ՀՀ		
	Բնակչության թիվը, հազար մարդ	ՀՆԱ-ն ընթացիկ շուրջ. գներով, մլրդ.դրամ	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, հազ.դրամ	Բնակչության թիվը, հազար մարդ	ՀՆԱ-ն ընթացիկ շուրջ. գներով, մլրդ.դրամ	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, հազ.դրամ
2000	134.4	23.1	172.2	3215.3	1033.3	271.7
2005	137.7	51.4	373.1	3219.2	2244	697.4
2010	143.6	118.2	832.2	3262.6	3501.6	1075.4
2011	164.3	135.5	936.1	3274.3	3776.3	1153.5
2012	146.6	150.0	1023.2	3021.4	4000.7	1324.1
2013	142.8	168.5	1180.2	3026.9	4272.9	1411.6
2014	143.0	188.8	1315.6	3017.1	4843.2	1605.3
2015	145.2	209.3	1442.5	3010.6	5021.1	1667.8
2016	146.1	229.6	1581.3	2998.6	5079.9	1694.1
2017	147.0	272.1	1851.0	2986.1	5580.1	1868.7

Ուսումնասիրվող տարիներին ՀՆԱ-ի աճի միջին տեմպը ԼՂՀ-ում կազմել է 117.4%, իսկ ՀՀ-ում՝ 112.5%, դրան զուգահեռ ԼՂՀ-ում բնակչության թիվը ավելացել է 9.3%-ով, իսկ ՀՀ-ում նվազել է՝ 7.1%-ով: Այս երկու ցուցանիշների փոփոխությունների արդյունքում ԼՂՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալները ավելացրել են 10.5 անգամ, իսկ ՀՀ-ում՝ 6.9 անգամ: Այս ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնել երկու երկրներում տնտեսական ինտենսիվ աճի առկայության վերաբերյալ, ինչը ներկայացվում է նաև գծապատկերով (տես գծապատկեր 1):

<sup>7</sup> ԱՀ վիճակագրական տարեգիրը, 2013-2017թթ., Ստեփանակերտ, 2018, էջ 27, [www.armstat.am](http://armstat.am)



Դժապատկեր 1 ԱՀ-ում և ՀՀ-ում բնակչության մեջ շնչի հաշվով ՀՆԱ-ի ճապատկերը 2010-2017թ.

ԱՀ սոցիալ-տնտեսական զարգացման անցած ժամանակաշրջանը պայմանականորեն բաժանվում է 4 փուլերի՝ 1-ին փուլ՝ (1991-1994թթ.), որի ընթացքում պատերազմական ակտիվ գործողությունների հետ միասին, իրականացվում է գոյության պայքար սոցիալ-տնտեսական ոլորտներում:

2-րդ փուլ՝ (1995-2004թթ.) տնտեսության վերականգնողական գործողություններ, ռեսուրսների պատերազմական դաշտից աստիճանական տեղափոխում տնտեսական դաշտ (աշխատանքային ռեսուրսներ, ենթակառուցվածքներ, հիմնական և շրջանառու կապիտալ և այլն):

3-րդ փուլ՝ (2005-2013թթ.), ինստիտուցիոնալ զարգացում:

4-րդ փուլ՝ (2014-2018թթ.), որտեղ հիմնական ուշադրությունն ուղղված է տնտեսական աճին և բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Երկրորդ ենթագլխում վերլուծվում է բարեկեցության մակարդակի վրա ազդող հիմնական գործուները և բարձրացման հիմնախնդիրները: Արդի վիճակագրությունը կենսամակարդակի և բնակչության բարեկեցության բնութագրման նպատակով կիրառում է ոչ թե այս կամ այն ցուցանիշը, այլ ցուցանիշների համակարգ, ինչն էլ արտացցում է հետազոտվող երևությի միայն առանձին կողմերը: Բնակչության կենսամակարդակի և բարեկեցության բնութագրման նպատակով հիմնականում օգտագործում են բնակչության մեջ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը, որը չի բացահայտում մի շարք էական գործոններ՝ կյանքի տևողությունը, եկամուտների անհավասարաշահ բաշխումը, մարդկանց ժամանցի համար հատկացվող միջոցներն ու ժամանակը, շրջակա միջավայրի վիճակը, փոփոխման միտումները և այլն:<sup>8</sup>

<sup>8</sup> Մարկոսյան Ա., Գեղամյան Ն. Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում. Եր.: Տիգրան Մեծ, 2006թ., էջ 98

Աշխատանքում զգալի տեղ է հատկացվել ԱՀ կրթության և առողջապահության ոլորտների վերլուծությանը, նրանցում տեղ գտած բացթողումների վերացման և հիմնախնդիրների հաղթահարմանը, ինչպես նաև սոցիալական տրանսֆերներին: Բացի կրթության և առողջապահության գործուներից, բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման վրա իր ազդեցությունն է թողնում նաև կիրավող սոցիալական տրանսֆերտային համակարգը, որն ըստ էության կոչված է մեմբերու սոցիալական բւեռացման հակասությունները և սոցիալական արդարության կարգավորումը:

Երկրորդ գլխի վերջին ենթագլխում քննարկվում են սոցիալական քաղաքականության հարցերը: Բնակչության բարեկեցության աստիճանը գնահատելու համար Արցախի Հանրապետությունում կիրառում են սպառման ագրեգացված ցուցանիշ և ենելով միջազգային փորձից, ընդունվում է, որ սպառումն ավելի սուուզ տեղեկություն է տալիս, քանի որ շատ զգայուն չէ կարճաժամկետ տատանումների հանրեա, քան եկամտի ցուցանիշը: Սակայն սպառումը ֆունկցիա է եկամտից: Բնակչության կենսամակարդակը բնութագրում է առանձին անհատի, ընտանիքի կամ սոցիալական խմբի կողմից իրացված ապրանքների ու ծառայությունների քանակով: Այս տեսանկյունից կենսամակարդակի ցուցանիշներից կարևորագույններից է նաև բնակչության եկամուտների չափը, որով էլ պայմանավորվում է նրանց ծախսերը և հետագա ծախսերի համար կատարվող խնայողությունները:

ԱՀ-ում արդյունաբերությունը տնտեսության հիմնական ճյուղերից է, որի հիմնական ցուցանիշները բերվում են աղյուսակ 2-ում:

Աղյուսակի տվյալները ցոյց են տալիս, որ ԱՀ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալը 2008-2017թթ. ավելացել է 385%-ով, արդյունաբերության մասնաբաժինը՝ 9.5 կետով, կազմակերպությունների թվը՝ 1.8 անգամ, ոլորտում աշխատողների թվաքանակը՝ 1285-ով (25.5%), միջին աշխատավարձը՝ 92.1%-ով:

Արցախում տնտեսության զարգացման ուղղությամբ իրականացվել և շարունակվում են իրականացնել տարատեսակ տնտեսական, սոցիալական, պաշտպանական, ներդրումային և այլ բնույթի ծրագրեր, որոնց մեջ առաջնությունը պատկանում է <<Հայաստան>> համահայլական հիմնադրամին, որի հանգանակած միջոցները հիմնականում ուղղվում են Հայաստան-Արցախ ֆիզիկական և տնտեսական կապերի ամրապնդմանը:

Հիմնադրամը ստեղծման օրվանից գերակայությունը տվյալ ճանապարհաշինարարությանը, կրթության և առողջապահական համակարգերի զարգացմանը, դրանով իսկ ստեղծելով կարևոր ենթակառուցվածքներ երկրի հետագա զարգացման համար:

Հաշվի առնելով, որ Հայաստանի և Արցախի տնտեսությունների ինտեգրման անհրաժեշտությունը և << անդամակցությունը ԵԱՏՄ-ին, նպատակահարմար է Արցախի արդյունաբերության ու գյուղատնտեսության միտումները քննարկել Հայաստանում դրանց զարգացման համատեքստում:

**ԱՀ-ում արդյունաբերության հիմնական ցուցանիշները 2008-2017թթ.<sup>9</sup>**

<b>Ցուցանիշները</b>	<b>Չափի միա- վորը</b>	<b>2008</b>	<b>2010</b>	<b>2013</b>	<b>2014</b>	<b>2015</b>	<b>2016</b>	<b>2017</b>
Արդյունաբերության մասնաբաժինը ավելացված արժեքում	%	15.2	18.7	14.1	16.8	16.4	16.9	24.7
Արդյունաբերա- կան կազմակերպությունների թիվը	Միա- վոր	220	304	376	379	346	369	395
Արդյունաբերա- կան արտադրանքի ծավալը	Մլn. դրամ	25345	42931	44339	52046	53541	58999	97490
Հիմնական արտադրական միջոցների արժեքը	Մլn. դրամ	45458	43362	86880	96361	145754	158986	178648
Աշխատողների ցուցակային թվաքանակը	Մարդ	5034	5357	6237	6258	6630	6345	6319
Միջին ամսական աշխատավարձ	Դրամ	86502	99637	140779	142820	155883	152107	166205

Գյուղատնտեսությունը կարևոր դերակատարություն ունի երկրի պարենային անվտանգության հիմնախնդրի լուծման, գյուղական բնակավայրերի զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման ու ընդհանուր տնտեսության կայունացման գործում:

Նշենք, որ 1990-ական թվականների սկզբին Արցախում իրականացվեցին ագրարային բարեփոխումներ՝ հողի և արտադրության մյուս միջոցների ապապետականացում և սեփականաշնորհում, կոլտնտեսությունների և սովորզների լուծարում, ինչի արդյունքում ծևափորվի 18375 գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսությանը սպասարկող, գյուղմթերքների իրացման և վերամշակման մի քանի տասնյակ ընկերություններ:

<sup>9</sup> ԼՐԿ վիճակագրական տարեգիրք, 2008-2014, Ստեփանակերտ, 2015թ., էջ 161

Ներկայումս Արցախի գյուղատնտեսությունը տայիս է երկրի ՀՆԱ-ի ավելիքան 13%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի մակերեսը մեկ շնչի հաշվով կազմում է 4.1 հա, այդ թվում վարելահողերինը 0.97 հա, այն դեպքում, երբ ՀՀ-ում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 1.4 և 0.96 հա:

Արցախում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունը նպատակավորված է ճյուղի, նրան սպասարկող ոլորտների արդյունավետության բարձրացմանը, դրա հիման վրա ընդլայնված վերատադրության պայմանների ստեղծմանը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների մեծացմանը, ինչն էլ ուղակիրեն կրերի բնակչության աղքատության մակարդակի կրճատմանն ու բարեկեցության աստիճանի բարձրացմանը:

Գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունն ուղղված է ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, տնտեսավարողների համար գործունեության և Ներդրումների բարենապատ պայմանների ապահովմանը, արտադրական ենթակառուցվածքների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության աշխատանքների կազմակերպման կատարելագործմանը:

**Երրորդ գլուխը՝ «Բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում»** վերնագրով, բաղկացած է երեք Ենթագլխից: Առաջին Ենթագլխում բնութագրվում են տնտեսական կայուն աճի ապահովման և տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները ԱՀ-ում, երրորդ Ենթագլխում սոցիալական տրանսֆերտները և դրանց դերը կենցաղային աղքատության հաղթահարման գործում, իսկ երրորդ Ենթագլխում վերլուծվում են աղքատության հաղթահարման ախտական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները:

Առաջին Ենթագլխում տրվում են Արցախ Հանրապետությունում տնտեսական աճի ապահովման ու տնտեսության զարգացման ուղղությունները: Տնտեսական աճի ապահովման և դրա հիման վրա հետագայում բնակչության բարեկեցության բարձրացման ամենահիմնական գործոնը կապիտալ ներդրումների իրականացումն է: Տնտեսագիտական գրականությունում ներդրումները ներկայացվում են միկրո և մակրո մակարդակներով: Միկրոմակարդակով ներդրումները բնորոշվում են որպես ֆիրմայի կողմից զարգացման երկարաժամկետ նպատակներով իրականացվող քաղաքականություն, որը նպատակ է հետապնդում մեծացնել շահույթի զանգվածը, առաջատար դիրք գրավել տվյալ շուկայում, ինչի համար նա այսօր կրճատում է սպառման ծավալը հանուն վաղվա օրվա բարեկեցության բարձրացմանը: Մակրոմակարդակում ներդրումները երկրի ամբողջական ծախսերի մի մասն է, որոնք ընդգրկում են արտադրության միջոցների և ապահովագում պաշարներում ֆինանսական պաշարների ավելացումը: Նշանակում է, ներդրումները երկրի ՀՆԱ-ի մի մասն է,

որոնք չեն սպառվում ընթացիկ ժամանակահատվածում, այլ ապահովում են կապիտալի աճ:<sup>10</sup>

Տնտեսական աճը <<բացահայտման>> գործընթաց է, քանի որ ձեռներեցները բացահայտում են առաջավոր տեխնոլոգիաներ և արտադրության կազմակերպման մեթոդներ ու հնարավորություններ, որոնք մինչ այդ չեն կիրառել, նրանք կարողանում են միավորել ռեսուրսները՝ ստեղծելով ավելի բարձր արժեք ունեցող ապրանքներ և ծառայություններ:<sup>11</sup> Դա հարստության ստեղծման ու տնտեսական աճի հիմնական տարրն է: Այդ գործընթացին նպաստում է շուկաների նկատմամբ վստահության և տնտեսական ազատության առկայությունը: Ակնհայտ է, որ կառավարության գործունեության ընդլայնումը բերում է շուկայական հատվածում տնտեսական աճի դանդաղեցմանը:

Արցախում պատերազմից հետո տնտեսությունը մեծ վնասներ կրեց՝ հատկապես արդյունաբերական ձեռնարկությունները դադարեցին գործել, գյուղատնտեսության ոլորտը գործեց չչին ներուժով, պարզունակ աշխատանքային գործիքների միջոցով արտադրությունը վերածվեց բնեղեն տնտեսության, արտադրական, սոցիալական ենթակառուցվածքները գրեթե ամբողջությամբ ավերվեցին, աշխատանքային ռեսուրսների գերակշիռ մասը ներգրավվեց հայրենիքի պաշտպանության գործում: Նման պայմաններում իրվաբնակը շտկելու, տնտեսությունը վերականգնելու համար խիստ անհրաժեշտություն առաջացավ օտարերկրյա ներդրումների նեգրավման ապահովումը:<sup>12</sup>

Նման ծանր խնդիրների լուծման համար, երբ գրեթե բացակայում են ներքին ներդրումների հնարավորությունները, օտարերկրյա ներդրումները դառնում են ուղղակի պահանջված, իսկ դրանց ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կիսթանեն արտասահմանյան կապիտալի ներփակիչն: Մասնավորապես անհրաժեշտ է ձևավորել բարենպաստ իրավաօրենսդրական դաշտ, ստեղծել մրցակցային բարենպաստ պայմաններ, ինչպես նաև բարելավել գործարար միջավայր:

Անառարկելի է, որ օտարերկրյա ներդրումների ներգրավման ամենահիմնական գործունը երկրի քաղաքական կայությունն է: Այդ առումով Արցախի Հանրապետությունը գտնվում է աննախանձելի վիճակում՝ ներկայիս ռազմաքաղաքական վիճակը և նրա նրա ճանաչվածությունը համաշխարհային գլոբալիզացիայի պայմաններում, հնարավորություն չեն տալիս Արցախին հանդես գալու որպես միջազգային իրավունքի սուրյեկտ, անհրաժեշտության դեպքում դիմել միջազգային արբիտրաժին, դատարաններին իրենց պահանջները ներկայացնելու և ըստ անհրաժեշտության իրավունքները պաշտպանելու, ինչն էլ Արցախի Հանրապետությանը ներդրումների առումով դարձնում է բարձր ոհսկային տնտեսական սուրյեկտ:

<sup>10</sup> Շարլ Ս., Ալեքսանդր Գ., Բեյլի Դ. "Инвестиции" М1998, № 126 /218էջ/

<sup>11</sup> Bazhal I., 2016, "The Theory of Economic Development of J.A.Schumpeter; Key Features", MPRA Paper N 69883, p.3-7

<sup>12</sup> Խաչատրյան Ա.Ա., "Иностранные инвестиции" курс лекции, М. 2009, 328стр.

ԱՀ տարածաշրջանային համաչափ զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներդրումների հիմնական մասը պատկանում է Ստեփանակերտին: Ընդ որում գնալով խորանում է այդ ճեղվածքը: Այսպես, եթե 2003 թ. դրությամբ ընդհանուր ներդրումների 16,2 տոկոսն էր կատարվում Ստեփանակերտում, ապա 2012-ի դրությամբ արդեն 73,3 տոկոսը: Ստեփանակերտում իրականացվող ներդրումների հաշվին 5 անգամ ավելի բարձր աճի տեմայ է ապահովում քան Արցախի մյուս շրջաններում, ինչն էլ խթանում է բնակչության միգրացիային մյուս շրջաններից ու գյուղական բնակավայրերից դեպի մայրաքաղաք, դա էլ իր հերթինն ուժեցանում է ուրբանիզացիայի գործընթացը:

Ներկայումս համաշխարհային բիզնեսի ամենաարագ զարգացող ոլորտներից է գրոսաշրջությունը, որի կապիտալ ներդրումների ներգրավման հիմնական նախադրյալ փոքր տնտեսական լազն է: Գրոսաշրջությունը լինելով ծառայության մատուցման տնտեսական ենթակառուցվածքի ոլորտ, մկանակատորի սկզբունքով խթանում է ընդհանուր տնտեսության զարգացմանը:

ԱՀ-ում աշխատանում է գրոսաշրջության ոլորտը: Նրա ենթակառուցվածքները՝ հյուրանոցային տնտեսությունները, հասարակական սննդի օբյեկտները, ճանապարհները և այլն, զարգացնելով կարելի է խթանել գրոսաշրջությունը: Այստեղ նոյնպես անհրաժեշտ են, ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրումներ: Ներկայումս հյուրանոցային բիզնեսի զարգացումը համարվում է գրավիչ ներդրումների համար: Այսպես, շվեյցարական «Сиркап Армения» ընկերությունը 1.5 մլն. ԱՄՆ դոլար գումարով կառուցել է ժամանակակից հյուրանոցներ: Մի քանի ամերիկահայ Շուշիում վերականգնեցին «Ան Ռուսական» հյուրանոցը: Այն ունի 31 հյուրատենյակ և միաժամանակ կարող է ընդունել 70 գրոսաշրջիկ: Ընդ որում, դրանից ստացված եկամուտները ծառայում են բարեգործական նպատակների և Շուշիի բարեկարգման համար, ինչն էլ կիսանի գրոսաշրջության զարգացմանը: Եթե խորհրդային տարիներին ԼՂԻՄ-ում գործում էր ընդամենը 4 հյուրանոց, ապա ներկայումս Արցախում առկա է 42 հյուրանոցային համայիններ 1187 տեղով, խոշորներն են՝ Արմենիա, Շուշի պլազա և Պարկ Հռեել հյուրանոցները:

Արցախում գրոսաշրջությունը հայտարարված է ազգային տնտեսության առաջատար ճյուղերից մեկը, ինչի համար դեռևս 2004 թվականին ընդունվել է <<Գրոսաշրջության և գրոսաշրջային գործունեության մասին>> ԼՂՀ օրենքը:<sup>13</sup>

Արցախի Հանրապետությունը գրոսաշրջության զարգացման համար ունի բոլոր տեսակի ռեսուրսներ՝ նպաստավոր բնակիմայական պայմաններ, պատմամշակութային և բնական հուշարձանների բազմազանություն, ազգային և տարածաշրջանային ավանդույթներ և այլ գրավիչ գործոններ, որոնց հաշվին կարելի է նպաստել ոչ միայն ավանդական գրոսաշրջության զարգացմանը, այլ նաև գյուղական տուրիզմի, էքստրեմալ և ազրովրոսաշրջության զարգացմանը:

<sup>13</sup> «Գրոսաշրջության և գրոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենքը (24.11.2004թ.)

Արցախը գրոսաշրջության զգալի ներուժ ունի, սակայն մնում է զարգացնել մարքեթինգային, գովազդային և ենթակառուցվածքային գործունեությունը, մշակել հեռանկարային համայիր ծրագրեր, ապահովել գրոսաշրջիկների աճ, ինչն էլ կնպաստի ֆինանսական միջոցների ավելացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և գործազրկության կրճատմանը: ԱՀ-ում գրոսաշրջության գործի կազմակերպումը դեռևս խնդիրներ ունի: Այսպես այցելելիս գրոսաշրջիկները տեղեկատվություն ստանում են հետևյալ արբյուրներից՝ ընկերներից և հարազատներից՝ 65.5%, նախկին այցելություններից՝ 25.3%, տուրոպերատորներից՝ 4.1%, ինտերնետից՝ 3.2% այլ արբյուրներից՝ 1.9%:<sup>14</sup>

Զրոսաշրջիկների գերակշիռ մասը հանգրվանում է հյուրանոցներում, իսկ դրանց քանակը, տեղերի թիվը և տեղաբաշխվածությունը կատարելագործման կարիք ունեն:

ԱՀ-ում գրոսաշրջության զարգացման հետագա զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել նաև մի շարք միջոցառումներ.

- Զրոսաշրջային տնտեսության միջոցների գույքագրում,
- Գովազդային տեղեկատվության պատրաստում,
- ԱՀ վարչական շրջաններում գրոսաշրջության կենտրոնների ստեղծում,
- Ոլորտի աշխատակիցների վերապատրաստում, միջազգային պահանջներին համապատասխան փորձի և հմտությունների յուրացման դասընթացների կազմակերպում,
- Մշակել «Դեպի Արցախ» ծրագիր, հատկապես Հայաստանի ուսանողների և բարձր դասարանի աշակերտների համար, կազմակերպել էքսկուրսիաներ և այլն:

Հաջորդ ենթագլուխը նվիրված է սոցիալական տրանսֆերտներին և նյութական աղքատության հարցերին: Սոցիալական տրանսֆերտները նպաստում են աղքատության աստիճանի կրճատմանը, հետևաբար, եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը, իսկ դրանց շահառուները չկարողանան փոխհատուցել այդ կորուստները, ապա աղքատությունը զգալիորեն կըրվի և էական կիսրանա: Դա ավելի ուժեղ կազդի հատկապես սոցիալական տրանսֆերտներ ստացողների վրա: Կենսաթոշակներն, ի տարբերություն սոցիալական աջակցության, առավել մեծ չափի ազդեցություն են թողնում աղքատության հաղթահարման վրա, որովհետև դրանք կայուն են և ավելի մեծ օրինականություն են պարունակում:

Համաձայն SSԿԱՀ արդյունքների 2017 թվականին Արցախի Հանրապետությունում կենսաթոշակառուների 57,6%-ը, երեխայի ծննդյան և խնամքի հետ կապված նպաստառուների 8,4%-ը, երկու տարեկանից բարձր երեխաներին տրվող նպաստառուների 5.6 , գործազրկության համար նպաստ ստացողների

<sup>14</sup> ԼՂ կառավարության 2014-2018թթ. տնտեսական քաղաքականության ծրագիր, էջ 88-90

0.1 և այլ բնույթի նպաստառուների 9.9%-ը համարում են եկամտի հիմնական աղբյուր: <sup>15</sup>

Նշված արդյունքներից կարելի է հանգել այն եզրակացության, որ թեև սոցիալական տրանսֆերտները ՀՆԱ-ի մեջ փոքր մեծություն են կազմում, այդուհանդերձ դրանք դեռևս մնում են էական ֆինանսական աղբյուր աղքատության հաղթահարման գործում: Վերլուծությունները ցույց են տալիս, որ եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը և բնակչությունը չկարողանա այդ բացը լրացնել այլ աղբյուրների հաշվին, ապա աղքատության և ծայրահեղ աղքատության աստիճանները բավականին կմեծանան:

Աղքատությունը որպես մարդկանց բարեկեցությունը բնորոշող առանցքային չափանիշ, կրում է համալիր բնույթ, միանգամից դրսւորվում է կյանքի բոլոր բնագավառներում: Հնարավոր չէ, որ այն արտահայտվի նրա մի կողմում, մյուս կողմերը լինեն բավարար մակարդակի: Ամբողջական աղքատությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ նյութական աղքատություն, ոչ նյութական աղքատություն և կոմունալ-կենցաղային աղքատություն:

Նյութական աղքատությունն արտահայտվում է մարդու կամ ընտանիքի կողմից պարենային, ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ ստանալու ցուցանիշներով: Ոչ նյութական աղքատություն դրսւորվում է բնակչության կողմից կրթության, առողջապահության, կրոնական հավատքի, մշակույթի, հանգստի, սպորտի և այլ համարժեք բարիքների հանդեպ մարդկանց կողմից հասանելիությամբ: Կոմունալ-կենցաղային աղքատության ոլորտն ընդգրկում է բնակչության բնակարանային պայմանները, խմելու ջրի մատչելիությունը, ջրահեռացումն ու աղքահանությունը, գազամատակարարումը, բնակարանների շենուցման կազմակերպումը, երկարաժամկետ օգտագործման այրանքների առկայությունը և այլն:

Ատենախոսության վերջին Ենթագլխում քննարկվում են ԱՀ աղքատության պետական աջակցության կառուցակարգերի և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները: Այստեղ հարկ է նշել, որ աղքատության հաղթահարման պետական աջակցության ծրագրերը և սոցիալական քաղաքականության մոդելները բազմազան են՝ յուրաքանչյուր երկիր ենթելով իր առկա ու պոտենցիալ հնարավորություններից, նպատակներից և խնդիրներից, ընտրում, մշակում և իրականացնում է իր ներուժի շրջանակներին համապատասխան միջոցառումներ: Այդ բնագավառում չկան միասնական ստանդարտներ:

Դեռևս ոչ վաղ անցյալում, նախկին Խորհրդային Միության հանրապետությունները կիրառում էին սոցիալական մոդել պետության գիշավոր դերակատարությամբ, որտեղ իրականացվում էր անվճար կրթություն, բուժօգնություն, սոցիալական ծառայությունների մի ամբողջ փաթեթ իր Ենթաօլորտներով:

<sup>15</sup> ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական-վերլուծական գեկուց, Ստեփանակերտ, 2017, էջ 83

Սոցիալական պաշտպանությունը հիմնվում էր ոչ թե զարգացած շատ երկրներում սոցիալական ապահովագրության վրա, այլ պետական սոցիալական ապահովության վրա: Պյանային տնտեսության պայմաններում սոցիալական ռիսկերը բացակայում էին, իսկ սոցիալական ապահովագրությունը դասվում էր շուկայական տնտեսության հատկանիշներին:

Արցախի Հանրապետությունը համընդհանուր բարեկեցության պետություն է, սակայն սոցիալական պետության հոչակումն ինքնին իրողություն չէ, այլ նպատակ, որը պետք է իրականություն դառնա պետության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի և սոցիալական քաղաքականության վարման միջոցով:

Սոցիալական աջակցությունների բնագավառը կարգավորվում է համապատասխան օրենքներով և կառավարության որոշումներով, որոնք սոցիալական երաշխիքներ են սահմանում բնակչության տարրեր խավերի ու խմբերի համար: Նախատեսվում է, որ առաջիկա տարիներին ԱՀ-ն պետք է անցնի նոր, սոցիալական համերաշխության քաղաքականության՝ սոցիալական խմբերի միջև անկաշկանդ տեղաշարժ, եկամուտների միջև նորմատիվային կապի ստեղծում, սերունդների միջև համերաշխության սկզբունքի կիրառում և այլն: Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական արդարության պահանջն առավելագույն սրվում է տնտեսական զարգացմանը զուգընթաց: Սակայն, այդ սկզբունքը Արցախի համար դեռևս օրինաչափ չէ:

Արցախի Հանրապետությունում սոցիալական ապահովումը պետական քաղաքականության գերակա ուղղություններից է, որի նպատակներից է հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը, սոցիալական անհավասարության կրճատումը: Դրան հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում են պետական միջոցառումներ, ծգություն են կատարելագործել սոցիալական քաղաքականության ուղիները:

Արցախում բնակչության աճին նպաստելու և բազմազավակ ընտանիքների բարեկեցությունը բարձրացնելու նպատակով 2000թվականից իրականացվում է ծնելիության և բազմազավակության խթանման ծրագիր: Ընտանիքներում 3-րդ, 4-րդ և հաջորդ երեսայի ծննդյան դեպքում բացվել են ժամկետային ավանդներ՝ 1-ին երեսայի ծննդյան դեպքում 100 հազ.դրամ, 2-րդինը՝ 200.0, երրորդինը՝ 500.0, 4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեսայի դեպքում՝ 700 հազ. դրամ:

Այս ծրագիրը նպաստեց ծնելիության ցուցանիշի բարձրացմանը, 2007թ-ին ծնվել է 2145 երեխա, 2008-ին՝ 2418, 2009-ին՝ 2821, 2010-ին՝ 2694, 2011-ին՝ 2586, 2012-ին՝ 2500, 2013-ին՝ 2371, 2014-ին՝ 2428 երեխա:<sup>16</sup>

<sup>16</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսների ծրագիր, Ստեփանակերտ, 2015, էջ 71

ԱՀ Կառավարության 2010թ. ապրիլի 16-ի N194-Ն որոշման ծրագրի վեց և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին հատկացվում է բնակելի տուն, որը կառուցվում է կապիտալ ներդրումների ծրագրով:

Արցախի Հանրապետությունում գնալով սրվում են գործազրկության խնդիրները: Գործազրկության մակարդակը 2014-ին կազմել է 13.3 , 2015-ին՝ 11.5 և 2016-ին՝ 15.8%:<sup>17</sup> Զբաղվածության բնագավառում բնակչությանը տրամադրվող հիմնական տրանսֆերներն են աշխատանք փնտորող հաշմանդամներին ֆինանսական աջակցությունը և գործազրկություններին նպաստներ վճարելը:

Այսպիսով, վերլուծելով Արցախի Հանրապետության պասիվ սոցիալական քաղաքականության արդյունքները, կարելի է անդեւ, որ դրա նպատակն է ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը, սոցիալական արդարության կիրառումը, տնտեսության զարգացման աջակցությունը և այլն:

Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների վերլուծությունը ցուց է տալիս, որ կառավարության կողմից սահմանված սոցիալական երաշխիքները բավարար չեն բնակչության նվազագույն կենսամակարդակի պահանջմունքները բավարարելու համար: Նվազագույն աշխատավարձի, միջին կենսաթոշակի և գործազրկության նպաստի չափերը բավական հեռու են սպառողական զամբյուղի մեծությունից:

Այս պարագայում անհրաժեշտ է նաև կիրառել սոցիալական քաղաքականության իրականացման հետևյալ հիմնական ուղիները.

1. Հարկարյութետային քաղաքականության կատարելագործում, դրա արդյունավետության բարձրացում,

2. Սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործում, որի տարրերն են սոցիալական ապահովումը, ինչը ներառում է սոցիալական աջակցության ծրագրերը և սոցիալական երաշխիքները, ինչպես նաև սոցիալական ապահովագրությունը,

3. Բնակչության աշխատանքային գործունեության հնարավորությունների ընդայնում:

Սուակել մեծ աջակցության պետք է արժանանան զոհված ազատամարտիկների, գինվորների, սպաների ընտանիքները, զավակները և ծնողները, որոնք իրենց կյանքը տվել են հանուն իրենց հայրենիքի ազատությանը, որպեսզի ապագա սերունդը կարողանա ապել արժանավայել: Սակայն, իրականությունը ցուց է տալիս, որ ամենաքիչ ուշադրության են արժանանում հենց այդ խմբի մարդիկ, հաճախ կիրառվում է նաև «չկա մարդ, չկա խնդիր» սկզբունքը, որն անբարոյական է:

<sup>17</sup> ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2017թ., Ստեփանակերտ, էջ 57

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության շրջանակներում կատարված հետևյալ հիմնական եզրահանգումներ՝

1. Քանի որ բնակչության եկամուտների վերաբերյալ բացարձակ ցուցանիշները ստույգ չեն բնորոշում նրանց եկամուտների իրական մեծությունը, կապված ստվերային տնտեսությունների չափերի, ընդգրկվածության աստիճանի (Եկամուտների չբացահայտելու հակվածության էֆեկտ) հետ, անհրաժեշտ է երկրում, բնակավայրում, ոլորտում կիրառել փորձագիտական գնահատականներ և սոցիոլոգիական արդյունքներ, որոնք առավել մոտ են լինում իրականությանը: Դրա միջոցով բնակչության դրամական եկամուտների և ծախսների հաշվեկշիռն ավելի ճիշտ պատկերացնում կտա դրամական եկամուտների ընդհանուր ծավալի մասին, ինչի արդյունքում կարելի է վերլուծել հաշվեկշիռ կառուցվածքը, մուտքերի աղբյունները և փոփոխության դինամիկան:

2. Արդյունաբերության զարգացումն Արցախում պահանջում է մեծ քանակի վերլուծական աշխատանք, գերակա ճյուղերի ճգրտման ու համապատասխան կլաստերների ծևավորման ուղղությամբ: Ներկայումս կլաստերային կառավարման անհրաժեշտությունը տեղական հանքարդյունաբերության, ոչ մետաղական հանքահումքային արտադրության, ալկոհոլային խմիչքների, գյուղատնտեսական մթերքների, հանքային ջրերի, սննդարդյունաբերության, գորգագործության, մասնաճագրության, արդամանդագործության, դեղագործության և մի շարք այլ ոլորտներում, որտեղ առկա են բավարար ուսուրքներ, կուտակված փորձ և արժեքի ավելացման հնարավորություն: Ելնելով համաշխարհային շուկայում կոնյուկտորային փոփոխությունից՝ նշված արտադրությունների անվանացանկը կարող է փոփոխվել: Այդ ցանկը հաստատվում է ԱՀ կառավարության կողմից միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Արդյունաբերական կլաստերների ֆինանսավորումն իրականացվում է Արցախի ներդրումային հիմնադրամի (ԱՆՀ) և այլ հիմնադրամների կողմից՝ պետական բյուջեի հնարավոր չափի մասնակցությամբ:

3. Փոքր քաղաքներում, հեռավոր և սահմանամերձ գյուղերում մշտական աշխատատեղեր ստեղծելու պարագայում դրանց իրականացնող գործարարներին տրամադրել խրախուսաւումներ՝ յուրաքանչյուր մշտական աշխատատեղի համար: Արտահանման ներուժ ունեցող, համապետական մասնագիտական կլաստերների արտադրանքի արտադրատեխնիկական բնութագրերը պետք է պաշտպանվեն օրենքով: Արցախի Հանրապետությունը <<Հիջոցով պետք է համագործակցի միջազգային կառուցների, մասնավորապես Եվրոպի շրջանակներում: «Արդյունաբերության համագործակցության ծրագրի» շրջանակներում:

Հայաստանին և Արցախին ծագում ունեցող արդյունաբերական ապրանքների մրցունակությունն արտաքին շուկաներում բարձրացման նպատակով, անհրաժեշտ է իրականացնել որակի հավատարմագրում, չափագրում և սերտիֆիկացում: Հայաստանի և Արցախի կառավարությունները պետք է

աջակցեն բարելավելու որակի համակարգը, ապրանքների որակական չափանիշները համապատասխանեցնեն զարգացած երկրների շուկաների պահանջներին: Մասնավորապես, անհրաժեշտ է ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան տեխնիկական կանոնակարգեր, ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխան փորձագիտական լաբորատորիաներ: Սերտիֆիկացնող մարմիններին նյութական աջակցություն ցուցաբերել միջազգային կառուցներում հավատարմագրվելու համար:

4. Զենավորել ագրարային ոլորտի պետական աջակցության ամբողջական համակարգ՝ կիրառել տարարնույթ սուբսիդիաներ, արտոնություններ, դոտացիաներ, դրանք դարձնել ոլորտի զարգացման քաղաքականության նպատակը և բովանդակությունը: Դրա համար պետք է ընդունել "Գյուղատնտեսության մասին" օրենք, որում սահմանվեն.

- գյուղատնտեսության ոլորտի և գյուղի զարգացման պետական քաղաքականությունը, մատնանշելով նախատակները, սկզբունքները, ուղղությունները և իրականացման ֆինանսական ծախսերի, արդյունքները,

- պետական քաղաքականություն գյուղիումքի, գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կարգավորման ասպարեզում, ոլորտին տրամադրվող պետական աջակցության ուղղությունները և կառուցակարգերը,

- պետական ծրագրերի ընթացքի ու արդյունքներին վերաբերվող տարեկան գեկույցի բովանդակությունը և դրա հետ առնչվող հարցերը,

- գյուղատնտեսության և գյուղի զարգացման ոլորտներում տեղեկատվական համակարգի ձևավորում:

Անհրաժեշտ է առաջնահերթ կարգով հստակեցնել գյուղատնտեսության կազմակերպարագական տնտեսություններին վերաբերյալ օրենսդրությունը, քարեփիտումների միջոցով զարգացնել լոգիստիկ համակարգ, օրենսդրութեն կանոնակարգել տնամերձների, այգեգործական ընկերությունների և գյուղացիական կոոպերատիվների իրավահարաբերությունները:

5. Գյուղմթերքների արտադրության սուբսիդավորումը պետք է հանդիսանա գյուղատնտեսական մթերքներ արտադրող տնտեսությունների պետական աջակցության հիմնական ուղղությունը: Յուրաքանչյուր ֆինանսական տարում Արցախի պետական բյուջեում պետք է առանձին հոդվածով նշվեն այն գյուղմթերքների ու բնակավայրերի անունները, որոնց համար տվյալ տարում նախատեսվում են սուբսիդիաներ: Գյուղացիական տնտեսությունը յուրաքանչյուր մթերման գործարքի դիմաց պետք է ստանա սուբսիդիա՝ ամեն միավոր արտադրանքի հաշվով: Տնտեսական զարգացման ներկա փուլում սուբսիդավորման քաղաքականությունը պետք է դառնա Արցախի գյուղատնտեսության աջակցություն, գյուղացուն ուղղված հիմնական գործիքը, որը պետք է միտված լինի սպառողին և չպարունակի կոռուպցիոն ռիսկեր: Միաժամանակ, առանձին դեպքերում, գյուղատնտեսական մթերքների արտադրության սուբսիդավորումը կարելի է գուգակցել երաշխավորված մթերման գների, վարկերի տոկոսադրույթի և լիգինգի պետական

համաֆինանսավորման գործիքակազմի հետ:

6. Արցախի Հանրապետությունում գրոսաշրջության հետագա զարգացումը պետք է իրականացվի կառավարության ծրագրի հիման վրա, որտեղ մեծ ուշադրություն պետք է դարձվի ենթակառուցվածքների զարգացման հարցերի վրա՝ հյուրանոցային ցանցի ընդլայնում և օպտիմալ տեղաբաշխում, վարչական շրջաններում ծառայությունների զարգացում, գյուղական բնակչության կենցաղին և համայնքային կյանքին ծանրթանալու հնարավորությունների ստեղծում, պատմամշակութային արժեքներին, բնության հրաշալիքներին մոտենալու համար ճանապարհների վերանորոգում և ծառայությունների մատուցում։ Անհրաժեշտ է մշակել և կիրառել Արցախում գրոսաշրջության զարգացման համայիր ծրագիր, որում ընդգրկվեն հետևյալ հարցերի լուծումը։

- վարչական շրջաններում հյուրանոցային ցանցի ընդլայնում, ներգրավել ԱՆՀ-ից ներդրումներ,

- պատմամշակութային արժեքներ ներկայացնող օրենսդրությունում, ճանապարհային ցանցի զարգացում,

- ագրոտուրիզմի, էկոտուրիզմի, էքստրեմալ տուրիզմի և մշակութային տուրիզմի զարգացման նպատակով մշակել և գործարկել հատուկ ծրագրեր։

Մշակել և իրականացնել «Դեպի Ղարաբաղ» էքսկուրսիոն ծրագիր, հիմնականում Հայաստանի ուսանողների, բարձր դասարանի աշակերտների, աշխատանքային կոլեկտիվների համար։ Առաջանցիկ տեմպերով զարգացնել պյանային, սոցիալական և ինքնագործ տուրիզմի տեսակները։ Պատրաստել միջազգային չափորոշիչներին համապատասխան էքսկուրսավարներ, որոնք պետք է տիրապետեն ռուսերեն, անգլերեն ու ֆրանսերեն լեզուներին։

Լուծել տուրօպերատորների և ինստերնետ կայքերի կողմից պահանջված որակի համապատասխան տեղեկատվություն մատուցելու հարցերը։

7. Կառավարությունը պետք է իր մասնակցությունը ցուցաբերի ոչ պետական ներդրումային հիմնադրամներին, որոնք կատարվում են ազգային նշանակության այս կամ այն շինարարության համար՝ ֆինանսական միջոցների հավաքագրումով և համաֆինանսավորումով։

ԱՀ բոլոր վարչական շրջաններում պետք է հիմնել ինովացիոն բժիշկ (կենտրոն, տեխնոպարկ, լաբորատորիա), գործարար աջակցության պետական կենտրոններ։ Ֆիզիկական և իրավաբանական անձիք այդ կենտրոններում պետք է հնարավորություն ունենան զարգացնելու իրենց ինովացիոն ձեռնարկատիրական ծրագրերը։ Անհրաժեշտ է էականորեն նվազեցնել կամ վերացնել լիցենզիաների դիմաց պահանջվող տուրքերը, հատկապես գինու արտադրության, կոնյակի, սպիրտի թորման թույլտվությունների դիմաց։ Դրանք տնտեսավարողների համար լրացնիք և նոր շուկաներ նվաճելու գործում։

8. Արցախում պետական բյուջեից կատարվում են շուրջ 90 տեսակի սոցիալական բնույթի վճարումներ (նպաստներ, թշակներ, կենսաթոշակներ, լրավճարներ, պարգևավճարներ, օգնություններ և այլն), որոնցից յուրաքանչյուրն ունի կոնկրետ սոցիալական հիմնախնդրի լուծման նպատակ։ Սակայն դրանց

զգայի մասը հաճախ իրար հակասող են և ոչ թե լրացնող, տրամաբանորեն չիհմավորված ժամանակի և տարածության մեջ:

Խոսքը հատկապես վերաբերվում է տրանսֆերտ համակարգին: Դրա համար ռացիոնալ կիխի կիրառել ընտանեկան նպաստների ընդլայնված համակարգ, որը կարող է փոխարինել պատերազմի հետևանքով կերակրողին կորցնելու, այլ պատճառներով ծնողներից գրկածներին և մյուս տեսակ ծախսերին ու փոխհատուցումներին: Ճիշտ կիխի ֆինանսավորել ոչ դրամական սոցիալական օգնությունները (պրոթեզավորման, թիկնասայլակներին, լսողական սարքերի հատկացում): Արդարացի կիխի բոլոր տեսակի թոշակները վերահաշվարկել միասնական մեթոդիկայով, խմբավորել նպաստներն, օգնությունները, լրամբարները և այլ կարգի հատկացումներն ըստ հասցեականության: Կապված ինֆյացիոն երևոյթների դրսնորումների հետ, անհրաժեշտ է ինդեքսավորել սոցիալական տրանսֆերտները, այդ նպատակով պետական տարեկան բյուջեի ծախսերի հողվածներում նախատեսել «սոցիալական տրանսֆերտների ինդեքսավորում» հողված:

9. ԱՀ-ում բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

- բարձրացնել աշխատանքի շահադրդումը՝ ստացվող եկամտի կախվածության հստակեցումը գործունեության արդյունքներով,

- ապանքների առաջարկի ավելացման համապատասխան մշակել և կիրառել իրական ՀՆՍ-ից կախված նվազագույն աշխատավարձի չափը կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծությունը հասցնելու կառուցակարգը,

- կենսաապահովման նվազագույն բյուջեի մակարդակից ցածր աշխատավարձի ազատում եկամտային հարկից, ծայրահեղ աղքատների սատարման ծրագրի մշակում,

- սոցիալական լարվածության թուլացման նպատակով ձևավորել պետական արտոնությունների համակարգ այն ներդրողների և կառուցների համար, որոնք կստեղծեն աշխատատեղեր:

## Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Ավագյան Ռ.Յու. ԼՂՀ բնակչության առողջական վիճակը բնութագրող ցուցանիշների վիճակագրական վերլուծություն: //ՀԱԱՀ միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված գյուղատնտեսության մեթենայացմանը և գյուղատնտեսական մեթենաշինությանը Երևան, 2013.- էջ 57-61
2. Ավագյան Ռ.Յու. ԼՂՀ-ի և ՀՀ-ի բնակչության կենսամակարդակի հիմնական ցուցանիշների համեմատումը: //Ազգոգիտություն, #1-2, Երևան, 2014.- էջ 13-16
3. Ավագյան Ռ.Յու. ԱՀ բնակչության եկամուտների և ծախսերի դինամիկայի և կառուցվածքի վերլուծությունը: //Ազգոգիտություն # 5-6, Երևան 2014.- էջ 240-244
4. Ավագյան Ռ.Յու. ԱՀ բնակչության աղքատության մակարդակի վիճակագրական վերլուծությունը ըստ կրթական աստիճանի: //Մեսրոպ Մաշտոց համալսարան Միջազգային գիտաժողով Կովկասը՝ մեր ընդհանուր տուն. Ստեփանակերտ 2017.- էջ 192-194
- 5 Ավագյան Ռ.Յու. Բնակչության սոցիալական ապահովության և կենսամակարդակի հիմնական ցուցանիշների փոխկապավածության վերլուծությունը /Արցախի տվյալներով/: //Այլընտրանք գիտական հանդես: # 4, Երևան, 2017.- էջ 275-282
6. Ավագյան Ռ.Յու. Աղքատության մակարդակի համեմատական վերլուծությունն ըստ Արցախի Հանրապետության բնակավայրերի: //«Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտական հանդես: 2018.- էջ 108-111
7. Ավագյան Ռ.Յու. Արցախի հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղությունները: // Այլընտրանք գիտական հանդես: # 2, Երևան ,2019.- էջ 207-215
8. Ավագյան Ռ.Յու. Արցախի հանրապետությունում աղքատության հաղթահարման պետության սոցիալական քաղաքականությունը և կատարելագործման ուժիները: //Այլընտրանք գիտական հանդես: # 3, Երևան, 2019.- էջ 210-218
9. Ավագյան Ռ.Յու. Սոցիալական տրանսֆերտներն որպես ԼՂՀ բնակչության աղքատության հաղթահարման գործոն: // Այլընտրանք գիտական հանդես: # 3, Երևան, 2019 . - էջ 219-227

**АВАГЯН РОЗА ЮРЬЕВНА**

**ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ УРОВНЯ ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ И  
ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ**

**Автореферат диссертации на соискание ученой степени кандидата  
экономических наук по специальности: 08.00.02 - «Экономика и управление  
хозяйством, его сферами».**

**Публичная защита диссертации состоится 12-го июля 2021 года в 14<sup>00</sup> часов  
на заседании Специализированного Совета ВАК РА 002 по экономике,  
действующего в Национальном аграрном университете Армении, по  
адресу: 0009, г. Ереван, ул. Терян 74.**

**РЕЗЮМЕ**

Бедность характерна почти для всех стран мира, в основном для стран с переходной экономикой, которые, осуществив резкий переход от административно-экономической системы к рыночным отношениям, изменили структуру образа жизни населения. В прежней экономической системе государство играло широкую роль в организации образа жизни людей, обеспечивая им хотя бы минимальный доход, бесплатное образование, медицину, во многих случаях также и в проведении отдыха, государство было гарантом социального обеспечения. В рыночных условиях эта сфера радикально изменилась, что сопровождалось изменениями объема, степени, глубины и уровня бедности. Этот вопрос больше всего вызывает беспокойство у Арцаха, который связан со сложной геополитической ситуацией, непризнанием, военными действиями, финансовым, материальным, энергетическим и продовольственным кризисом, которые оставили свой след на уровень бедности и благосостояния населения.

Нынешние объемы инвестиций в Республике Арцах далеко не достаточны, что очень мало для обеспечения устойчивого экономического роста. Несмотря на осознание правительством Арцаха решающей роли инвестиций, формированная макроэкономическая стабильность, законодательная база регулирующая инвестиции, наличие поощряющих и защищающих инфраструктур, и активное участие диаспоры в этом вопросе, тем не менее, из-за высокого риска ведения бизнеса, который обусловлен сложной геополитической ситуацией, инвестиции находятся на нежелательном уровне.

Все это прямо и косвенно влияет на социальный статус страны и, в частности, на уровень жизни населения. Реформы социальной сферы в Арцахе не основывались на классификации приоритетов и целей социальной политики, которые были больше тактическими, а не стратегическими. Усилия правительства страны по удовлетворению потребностей уязвимых групп по-

прежнему имеет некоординированный подход, поскольку социальная политика находится на стадии развития, а существующие недостатки обусловлены отсутствием единой концепции социальной политики, основанной на реальных экономических возможностях, недостаточностью институциональной и законодательной базы для социального обеспечения, отсутствием системы исследования социальных процессов, вклад которого позволит уточнить достоверность прогнозов социальных последствий проводимых реформ.

**Целью** диссертации является выявление основных путей решения проблем повышения уровня жизни населения Республики Арцах, что, в первую очередь, позволит снизить уровень безработицы, бедности, смягчить его степень, обеспечить справедливое распределение доходов и провести социальную политику, которая приведет к восстановлению доверия к властям.

Работа состоит из введения, трех разделов, заключения и списка использованной литературы.

**Введение** обоснована актуальность темы, представлен объект и субъект, сформулированы цели и задачи исследования, научная новизна, теоретическая и практическая значимость работы.

**Первая глава** под названием «Методологические основы благосостояния» состоит из трех разделов где рассматриваются: «Экономический рост и современные подходы и модели (методы) расчета», «Факторы, влияющие на уровень жизни населения, и их организационно-экономический подход управления и современные подходы оценки» и «Международный опыт сокращения бедности и улучшения уровня жизни».

**Во второй главе** «Анализ и оценка экономического роста и уровня благосостояния в Республике Арцах» рассматриваются социально-экономические показатели Республики Арцах, представлены основные факторы, влияющие на уровень благосостояния, их анализ и вопросы проблемы, после чего приведена ссылка на программы государственной поддержки сокращения бедности и социальной политики.

**Третья глава:** «Пути улучшения благосостояния населения и преодоления бедности в Республике Арцах», состоит из трех разделов. Первый раздел описывает основные направления обеспечивания устойчивого экономического роста и развития экономики в Республике Арцах, второй раздел посвящен социальным трансфертам и их ролям в преодолении бедности, а в третьем разделе анализируются механизмы государственной поддержки в преодолении бедности и пути совершенствования социальной политики.

Проведенные исследования позволили проанализировать проблемы повышения благосостояния населения Республики Арцах, прийти к определенным выводам и сделать на их основе предложения в контексте развития экономики, преодоления бедности и решения социальных вопросов.

ROZA AVAGYAN

# **THE MAIN PROBLEMS OF INCREASING THE LIVING STANDARDS OF POPULATION AND THE WAYS OF THEIR OVERCOME IN THE REPUBLIC OF ARTSAKH**

**The abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the speciality 08.00.02- "Economics and management of economy and its spheres".**

**The defense of the thesis will take place on 12 July 2021, at 14<sup>00</sup> o'clock at the Meeting of 002 specialized Council in economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan,0009**

## **SUMMARY**

Poverty is typical for almost all countries of the world, mainly for countries with transitional economies, which, having made a sharp transition from the administrative-economic system to market relations, changed the structure of the way of life of the population. In the former economic system, the state played a wide role in organizing the way of lifestyle, of people providing them with a minimum income, free education, medicine, and in many sphere how to spend their leisure time, the state was the guarantor of social security. Under market conditions, this sphere has radically changed, which was accompanied by changes in the volume, degree, depth and level of poverty. This issue is most worrying for Artsakh, which is associated with a complex geopolitical situation, non-recognition, military actions, financial, material, energy and food crises, which have left their stamp on poverty and on the level of well-being of the population.

The current investments in the Republic of Artsakh are far from being sufficient, which is very small for providing sustainable economic growth. Despite the consciousness of Artsakh's decisive role in investments, the formed macroeconomic stability, the legislative framework governing investments, the availability of encouraging and protecting infrastructures, and the active participation of the diaspora in this matter, however, due to the high risk of doing business due to a complex geopolitical situation and investments are not at the desired level.

All this directly and indirectly affects on the social status of the country and, in particular, the standard of living of the population. Reforms in the social sphere in Artsakh were not based on the classification of priorities and objectives of social policy, which were tactical and not strategic. The efforts of the country's government to meet the needs of vulnerable groups still have non-coordinated approach, since social policy is at a developmental stage, and the existing shortcomings are due to the lack of a unified concept of social policy based on real economic opportunities,

insufficient institutional and legislative base for social security, in the absence of a system for the study of social processes, whose contribution will make it possible to clarify the accuracy of social consequences of ongoing reforms.

The purpose of the thesis is the agendas, which identifies the main ways of solving the problems of raising the level of life of the population of the Republic of Artsakh, which, first of all, will reduce unemployment rate and level of poverty, ensure a fair distribution of income and conduct social policies, which will lead to the restoration of trust in the authorities.

The work consists of introduction, three chapters, conclusion and list of references. The relevance of the subject is substantiated, the object and the subject are presented, the goals and objectives of the research, scientific novelty, theoretical and practical significance of the work are formulated in the introduction.

In the first chapter, entitled "The theoretical and methodological basis of welfare" consists of three sections: "The economic growth and modern approaches and models (methods) of its calculation", "The factors influencing on the standards of living and their organizational-economic management's and modern assessment approaches" and "The international experience of reducing the poverty and improving living standards".

In the second chapter, "Analysis and assessment of economic growth and welfare in the Republic of Artsakh", examines the socio-economic indicators of the Republic of Artsakh, presents the main factors affecting the level of well-being, their analysis and issues of improvement, after which reference is made to state supporting programs for poverty reduction and social policy.

The third chapter, entitled "The ways of increasing the well-being of the population and overcoming the poverty in the Republic of Artsakh," consists of three sections. The first section describes the main directions of providing the sustainable economic growth and economic development in the Republic of Artsakh, the second section is devoted to social transfers and their roles in overcoming poverty, and the third section analyzes the mechanisms of state support in overcoming poverty and ways to improve social policy.

The conducted studies allowed to analyze the problems of improving the population welfare of the Republic of Artsakh, to come to certain conclusions and to make proposals based on them in the context of economic development, overcoming poverty and solving social issues.

A handwritten signature in black ink, appearing to read "A. J. Aghajanyan".